ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» հունվարի 2024թ. Հր. 35-Ա
ք. Երևան

«ԻՄՊՈՐՏ ԳՐՈՒՊ» ԵՎ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2024 թվականի կարիքների համար Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/06» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Իմպորտ Գրուպ» (ՀՎՀՀ 02302642, գործունեության հասցե՝ Ք.Երևան, Շարուրի փ. 25շ. 38) և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» (ՀՎՀՀ 00522502, գործունեության հասցե՝ Ք.Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից 2024 թվականի հունվարի 9-ի ներկայացված հայտում 1-4-րդ չափաբաժինների (սեղանի համակարգիչներ, համակարգչի էկրան/մոնիտոր, տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, դյուրակիր համակարգիչ) մասով հրավերի պահանջների նկատմամբ առկա են եղել անհամապատասխանություններ: Վերոնշյալ կազմակերպությունների կողմից խախտվել են հրավերի 2.1-րդ կետով սահմանված պահանջները՝ մասնավորապես «ԷԼ ԸՆԴ ԷՎ»-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1 ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-ը ներկայացված էր այլ պատվիրատուի անվամբ և անստորագիր, ներկայացված չէր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը Հավելված 1.2, ներկայացված չէր տեխնիկական բնութագրերը՝ այդ թվում նշված չէր առաջարկվող ապրանքների մոդելները, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները և արտադրողները, իսկ «Իմպորտ Գրուպ»-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1 ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-ը ներկայացված էր անստորագիր, ներկայացված չէր

իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը Հավելված 1.2, ներկայացված չէր տեխնիկական բնութագրերը՝ այդ թվում նշված չեն առաջարկվող ապրանքների մոդելները, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները և արտադրողները:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 41-րդ կետի, հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ 2024 թվականի հունվարի 9-ին ծանուցել է վերոնշյալ կազմակերպություններին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ծանուցման արդյունքում սահմանված ժամկետում չեն շտկվել անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» և «Իմպորտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները խախտել են գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջիններիս հետագա մասնակցության դադարեցմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 42-րդ կետի դրույթները՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» և «Իմպորտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Համապատասխանում է բնօրինակին,
Անձնակազմի կառավարման վարչության
Խորհրդական, վարչության պետի
պարտականությունները կատարող Մ. Մարտիկյան